**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ

*Մարտի 27-ին Մայր Տաճարում Ծրագալույցի Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ ծ. վարդապետը, որը և հավուր պատշաճի քարոզ խոսեց։*

*Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

* * *

*Զատկի օրը Մայր Տաճարում խուռն բազմության ներկայությամբ Ս. Պատարագ մատուցվեց։*

*Պատարագիչն էր Տ. Կարապետ Եպիսկոպոսը, որը և հավուր պատշաճի քարոզ խոսեց։*

*Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։*

* * *

*Մայր Աթոռի Միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմը վեհարանի դահլիճում Զատկական Տոնի առթիվ իրենց շնորհավորանքները մատուցելով Վեհափառ Հայրապետին, արժանացան Նորին Ս. Օծության հայրական օրհնությանը։*

* * *

*Տեղական եկեղեցիներում քարոզելու և հավատացյալներին հոգեպես մխիթարելու համար Զատկական տոներին Տ. Կարապետ վարդապետը և Տ. Նահապետ աբեղան մեկնեցին Երևան, իսկ Տ. Կոստանդին աբեղան մեկնեց Լենինական։*

* * *

*Քրիստոսի Հարության Մեծ Տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի անունով բազմաթիվ շնորհավորական հեռագրեր են ստացվել, որոնց թվում Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա-ից, Երուսաղեմի ու Կ. Պոլսի Պատրիարքարաններից, Թեմական Առաջնորդներից ու Խորհուրդներից։*

* * *

*Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ Քրիստոսի Հարության Մեծ Տոնի առթիվ շնորհավորական հեռագրեր է հղել Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ին, Երուսաղեմի Պատրիարք Կյուրեղ Բ-ին, Կ. Պոլսո Պատրիարքական Տեղապահ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանին և թեմական Առաջնորդներին ու Թեմական Խորհուրդներին։*

* * *

*Իրանից ներգաղթած Տեր Վաղարշակ քահանա Բաղումյանը Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից Թալինի շրջանի Դրմբլու գյուղի ծխատեր քահանա կարգվեց։ Միաժամանակ նրան հանձնարարվեց հովվել նաև Զառինջա գյուղի հավատացյալներին։*

* * *

*Հունաստանից ներգաղթած Տեր Գաբրիել քահանա Արաբյանը և Ֆրանսիայից ներգաղթած Տեր Գյուտ քահանա Միքայելյանը Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից Կոտայքի շրջանի Քանաքեռ գյուղի եկեղեցու ծխատեր քահանաներ կարգվեցին։*

* * *

*Մարտի 13-ին Ս. Գրիգոր Լուսավորչի տոնի օրը Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոս Թումանյանը Ջուլախաչ գյուղի ընծայացու, միջնակարգ դպրոցավարտ Լևոն Տեր-Հովհաննեսի Գրիգորյանին քահանա ձեռնադրեց, վերակոչելով Տ. Գրիգոր։*